

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական լաբորատորիա

Ուսումնասիրություն

2014-2015 ուստարվա 10-11-րդ դասարանցիների տարեկան գնահատման ցուցանիշներ, գնահատման համապատասխանությունը կրթահամալիրում գործող կարգին

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական լաբորատորիան կրթահամալիրի տնօրենի առաջարկով անցկացրել է ուսումնասիրություն կրթահամալիրի ավագ դպրոցների 2014-2015 ուստարվա 10-րդ և 11-րդ դասարանցիների շրջանում, պարզելու համար թե ինչպես է գործել կրթահամալիրի խորհրդի կողմից հաստատած գնահատման կարգը սովորողների տարեկան արդյունքները գնահատելիս:

✓ *Ուսումնասիրության հիմքեր.*

Գնահատումը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում (2014-2015 ուստարի)

- *Գնահատման էլեկտրոնային համակարգ. քննացիկ և կիսամյակային գնահատում*
- *Սովորողի ուսումնական աշխատանքի գնահատում*
- *Ավագ դպրոց*
- *5-12-րդ դասարանում կիսամյակային գնահատականը փոխելու կարգ*
- *10-րդ և 11-րդ դասարանցիների 2014-2015 ուստարվա էլեկտրոնային մատյաններ*
- *2014-2015 ուստարվա 10-րդ և 11-րդ դասարանցիների բլոգներ*
- *Անհրաժեշտության դեպքում՝ նրանց դասավանդողների բլոգներ*
- *Առարկայական ծրագրեր*
- ✓ ***Գնահատման գործիքը** (աշխատանքը կատարված է Excel ծրագրով կազմված հարցաշարով)*
Հարցաշարի բովանդակությունը.
 - *Սովորողի ազգանուն -անուն*
 - *Դասարան, դպրոց*
 - *Առարկա, դասավանդող*
 - *Բլոգ, բլոգի վերջին թարմացում*
 - *Առարկայական առաջադրանքի, հաշվետվության առկայություն բլոգում*
 - *Տարեկան գնահատում*
 - *Ուսումնասիրություն անցկացնող*

✓ **Ուսումնասիրման ժամանակացույցը**

	<i>Ժամանակահատված</i>	<i>Աշխատանքների համակարգում</i>	
Ուսումնասիրության պլան	2 օր	մասնագետ	Փոքր խմբով քննարկում
Ուսումնասիրության գործիք			լաբորատորիայում
Տեղեկատվության հավաքում, մշակում	5-7 օր	Գրասենյակի ղեկավարներ, լաբորատորիայի այլ մասնագետներ	
Ուսումնասիրության արդյունքների ամփոփում, վերլուծություն	3 օր	Մասնագետ	

✓ **Ուսումնասիրության ընտրանքը** (ընտրանքի քայլը՝ 3, որոշ տեղերում անհրաժեշտությունից ելնելով փոխվել է քայլը)

- Կրթահամալիրի ավագ դպրոցների սովորողների թիվը.

Աղյուսակ 1

Դպրոց	10-րդ դաս	ընտրվել է	11-րդ դաս	ընտրվել է
Ավագ դպրոց վարժարան	59	18	66	20
Արհեստների դպրոց	11	4	19	6
Գեղարվեստի դպրոց	15	5	40	12
Ընդհանուր	85	27	125	38

Ուսումնասիրությունը մասնակցել են (ընտրվել են) կրթահամալիրի 3 ավագ դպրոցների 2014-2015 ուստարվա 10 և 11-րդ դասարանների սովորողներ (սովորողների 30%-ը. տե՛ս աղյուսակ 1-ը):

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2014-2015 ուստարվա 10-րդ և 11-րդ դասարանցիները ունեն բացված-ֆիքսված բլոգներ, բացառությամբ որոշ հատուկ կարիքով սովորողների: Կան սովորողների բլոգներ, որ չեն գործել: Դպրոցից-դպրոց պատկերը զգալիորեն տարբեր է: Արհեստների դպրոցում սովորողների բլոգները աղքատիկ են, հիմնականում առաջադրանքներ և նյութեր տեղադրված են «համակարգչային շահագործում» առարկայից և «Ես կարողանում եմ» ստուգատեսի շրջանակում 5-10 տող շարադրանք: Կարծում եմ՝ ավագ դպրոցում սովորողի ուսումնական գործունեության ներկայացումն այս ֆորմատով հաջող չէ: Ուսումնասիրությանը մասնակցած մի քանի սովորողի բլոգներում կան ուսումնական պլանով

նախատեսված առարկայական բաժիններ և կատարված առաջադրանքներ: Գեղարվեստի դպրոցում և ավագ դպրոց-վարժարանում բլոգները հիմնականում գործող են. կան առարկայական բաժիններ (չի գործել ... բլոգ): Սովորողների բլոգներում կան կատարված առարկայական առաջադրանքներ, բայց դրանք քիչ են, շատերի մոտ մեկանգամյա միջոցառման բնույթ են կրում: Եթե կրթահամալիրի դպրոցների միջև համեմատություններ անենք, ապա ուսումնական բլոգը ավելի հաջողված կարելի է համարել վարժարանի սովորողների մոտ, հատկապես մաթեմատիկայի և խոսքի մշակույթի բաժինները:

Ինչ վերաբերում է տարեկան գնահատանիշներին, արհեստների և գեղարվեստի դպրոցների սովորողները չունեն տարեկան անբավարար գնահատականներ: Վարժարանում կան սովորողներ, որ ունեն տարեկան անբավարար (2014-2015 ուստարվա 10-րդ դասարանում՝ 14 սովորող, 11-րդ դասարանում՝ 27 սովորող) գնահատականներ: Գրասենյակի ղեկավարի տրամադրած տեղեկատվության համաձայն յուրաքանչյուրի համար կազմվել է պայմանագրի անհատական հավելված, համաձայն որի սովորողին տրվել է հնարավորություն մինչև 2015-2014 ուստարվա առաջին կիսամյակի նոյեմբերի 30-ը վերահանձնել, փոխել տվյալ առարկայի գնահատականը:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ կան սահմանված կարգի և իրական գնահատման անհամապատասխանություններ: Մեջբերում կարգերից.

- Համաձայն կրթահամալիրում գործող գնահատման կարգի. *«Կիսամյակային և տարեկան գնահատման հիմքում դրվում է ընթացիկ գնահատումը, որն արված է սովորողի անհատական բլոգի, ուսումնական օրացույցի, անհատապես և խմբով կատարած աշխատանքների այլ թղթապանակի հիման վրա, հետազոտական-ստեղծագործական հրապարակված աշխատանքը (աշխատանքային նախագիծ), ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, օլիմպիադաներին, այդ թվում՝ մեդիա, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցությունը, լրացուցիչ կրթությունը, որոնք արձանագրվում են սովորողի կողմից իր բլոգում հրապարակվող հաշվետվություններում: Սովորողի հաշվետվության հղումը գրասենյակի ղեկավարը տեղադրում դպրոցի կայքի «Հաշվետվություններ» բաժնում»: (տե՛ս [Գնահատման էլեկտրոնային համակարգ. ընթացիկ և կիսամյակային գնահատում](#)):*
- *Նիշային գնահատումը կատարում է դասավանդողը՝ սովորողի բլոգում տեղադրված աշխատանքի (գրավոր, աուդիո, վիդեո) հիման վրա: Գնահատված աշխատանքը սովորողի բլոգում պահպանվում է մինչև դպրոցն ավարտելը: Դասավանդողը գնահատելիս կարող է օգտագործել նաև կատարված աշխատանքի դասարանային ներկայացումները: Սովորողը*

կարող է բողոքարկել դասավանդողի նշանակած գնահատանիշը: Դրա համար նա գրավոր դիմում է վարժարանի ղեկավարին, նշելով գնահատված աշխատանքի հղումը:

Վարժարանի ղեկավարը երեք օրվա ընթացքում կազմակերպում է աշխատանքի վերստուգումը՝ այլ մասնագետների մոտ: Վերստուգող մասնագետը կարող է հանդիպում պահանջել սովորողի հետ: Վերստուգման արդյունքում գնահատանիշը կարող է փոխվել: (տե՛ս 2014-2015 ուստարում [Ավագ դպրոց](#)-ի սովորողի աշխատանքի ամփոփում):

Ուսումնասիրությանը մասնակցած սովորողների մոտ

- ✓ չկան կարգին համապատասխան գործող բլոգներ
- ✓ չկան կարգում արտացոլված սովորողի հաշվետվություններ
- ✓ սովորողի բլոգում տեղադրված չեն բավարար չափով աշխատանքներ, կատարված առաջադրանքներ:

Ուսումնասիրության արդյունքում ձևավորված առաջարկներ.

- ✓ Ավագ դպրոցի 2015-2016 ուստարվա գնահատման կարգում անել փոփոխություններ:
- ✓ Անդրադառնալ սովորողի բլոգին ներկայացված պահանջներին:

Լուսինե Ալեքսանյան

30.09.2015